



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

2

ԳԼՈՒԽ Դ ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԹԷ ՌՅՔ ԵՆ ԴԱՏԱԻՈՐՔ ԶԱՆԱԶԱՆԵԱԼՔ

Առաջին դատաւոր ամենեցուն Աստուած է, ըստ այնմ, թէ՛ դատի Տէր գժողովորդ իւր, եւ Եսայի այլոր ասէ՛ Տէր դատաւոր մեր, եւ թէ՛ քննէ զսիրտս եւ զերիկամունս Աստուած, եւ դարձեալ՝ արի, Աստուած, եւ դատեա զդատաստանս քո, եւ՛ Աստուած դատաւոր արդար, եւ այլ այսպիսիք նախանկար տնօրէնութեան դատաստանի, որովք յայտ է մարդկան լինել դատաստան, թէպէտ եւ գրեաց Աստուած ի ձեռն Մովսիսի, եթէ անասուն, որ հարկանէ զանասուն, փոխանակ նորա եւ նա սպանցի, եւ այս՝ ի խրատ մարդկան: Եւ դիւաց եղեւ դատաստան, քանզի երբ ամբարտաւանեցան, ընկեաց Աստուած զսատանայ յերկնից, զնոյն եւ յերկրորդ գալուստն Քրիստոսի դատել ունի զսատանայ: Վասն այսորիկ ի լինելութեան մարդոյն բնութեամբ եղաւ անունն Տէր, որ կոչի դատաւոր:

Իսկ Քրիստոս ասաց, եթէ՛ ի դատաստան եկի յաշխարհս յայս, եւ թէ՛ Հայր ոչ դատի զոք, այլ զամենայն դատաստան ետ Որդոյ իւրոյ, եւ՛ այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ, եւ սիրեցին մարդիկ զխաւար, եւ այլ այսպիսի բազում: Բայց Աստուած անուն զբնութիւն ոչ որոշէ, զի իբր դատաւոր Որդի, դատաւոր Հայր եւ Հոգի, ըստ վկայութեանցոյ: Եւ սակայն ոչ ինչ դժուարին է ցուցանել զյատկութիւն դատողութեան Հօր եւ Հոգոյ, ըստ այնմ՝ դատ արա ինձ,

Աստուած, եւ դատեա, Տէր, գայնոսիկ, ոյք դատեն գիս, զոր եւ Հօր պատշաճի այս: Եւ Հոգին եկեալ յանդիմանեցէ զաշխարհս վասն մեղաց եւ վասն արդարութեան, եւ վասն դատաստանի եւ այլ բազում բանս նման սոցին:

Երկրորդ՝ քանզի Աստուած ետ գանուն դատողութեան մարդկան, ըստ այնմ, եթէ՝ դատ արարէք որքոյն եւ այրոյն: Հասարակաց ասէ զբանս առ թագաւորս, եւ առ քահանայս, եւ առ իշխանս, եւ առ ծերս ժողովրդոց: Յայսոսիկ տես զՍողոմոն, եւ զորս զկնի Յեսուայ, եւ զորս յանապատին կարգեաց Մովսէս. գնոյն եւ Դանիէլ, եւ զորս ասաց մարգարէն՝ քահանայք, կացէք ի վերայ դատաստանի արեան: Եւ հասարակաց ետ զհրամանս, թէպէտ եւ մի է ի շնորհաց ըստ հնոյն: Առաջին՝ զի մի առ ի չգոյէ դատաւորին մերձ, դատախագքն զիրեարս վնասեցեն:

Եւ երկրորդ՝ թէպէտ եւ դատաւոր մի լինի ի քաղաքի, բայց ամենեքեան պատուականքն պատիւ ունիցին: Իսկ Քրիստոս ասաց ընդ առաքեալսն՝ նստջիք յերկոտասան աթոռս դատել զերկոտասան ազգն Իսրայելի, զոր եւ ունին քրիստոնեայք մինչեւ ցայսօր՝ երկոտասան դատաւորս նստուցանեն ի դատարանի իրեանց:

Իսկ Աստուած գամենայն որ անձին իւրոյ եցոյց դատաւոր յառակս դատաւորին անիրաւութեան, զի ի մեզ խորհուրդն ի վերայ կալով՝ ամենայն որ իւր դատաւոր լիցի մտօք եւ ոչ թիրեցի ի հոգեւոր դատաստանաց:

ԳԼՈՒԽ Ե ՅԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԴԱՏԱՍՏԱՆ, ԵՒ ՈՐՈՅ, ԵՒ ՈՒՄ ԱՒԱՆԴԵԱԼ Է ԶԻՐՍ ԴԱՏԱՍՏԱՆԻ

Թարգմանի դատաստանարանդ՝ դատել, որ է քննել, աստան, որ է տեղի, արան, որ է դատարան կամ գննարան, զի քննելով վճարի դատաստան յիմաստուն դատաւորաց ի մէջ անուղղայ մարդկան: Զի բազումք են յանուանող այդպիսիք, որպէս՝ Հայաստան կամ Ասորեստան, նմանապէս եւ՝ այլք:

Եւ արդ ցուցցուք, թէ որք են դատաւորք: Զի երեք կերպիւ վարին մարդիկ՝ բարի, եւ չար, եւ միջակ: Եւ պարտ է ընտրել զդատաւորս ոչ յորդոր ի չարս: Որպէս Սողոմոն երկուց կանանցն արար դատաստան եւ քննէր զկարծեցուցեալ իրս, եւ Դանիէլ ծերոցն զստութեամբ զասացեալսն յայտնէր, այսպէս եւ Քրիստոս

յերկրորդ գալստեանն իւրում առնելոց է. ասէ առ արդարսն՝ եկա՛յք, օրինեալք
Հօր իմոյ, եւ ցմեղաւորսն ասէ՝ երթա՛յք յինէն, անիծեալք, յորոց յայտ է միջակացն
լինել դատաստան: Եւ աստ միջակք են ապաշխարողք, զորոց զգործս
ապաշխարութեան կշռելի է ընդ մեղացն, եւ առաւելեալն տանի զվճիռն:
Զերկուսն առնելով զծայրսն՝ եցոյց առանց դատաստանի զոմանս կոչել
գովութեամբ գործոցն եւ զոմանս մերժել պարսաւանօք գործոցն, յորոց ուսանիմք՝
ընդ ծայրիցն եւ միջակացն լինել դատաստան:

Եւ արդ, այսոցիկ յոյժ պէտք են իմաստունս լինել դատաւորաց ուսման եւ
հանճարոյ, զի Աստուծոյ կամացն կատարողք լիցին ի հոգեւորս եւ ի
մարմնաւորս, որպէս զի ըղորդ արասցեն գդատաստանս, այլ եւ բարեմիտս՝ զի
մի՛ առ երեսս առնէ ամաշելով եւ կամ ի հարկէ:

Այլ եթէ ու՛մ աւանդելի է: Եւ քանզի ըստ Օրինացն յատուկք էին դատաւորքն, եւ
ըստ պատահման եղեն թագաւորք, եւ մարգարէք, եւ քահանայք, որպէս ասացաւ
յառաջագոյն: Այլ քանզի առ մեզ ապականեալ է այսպիսի կարգ, աւանդելի է
զիրս դատաստանի ի ձեռս եպիսկոպոսաց է յանձին հոգք եկեղեցոյ եւ
աշխարհաց, եւ յետ եպիսկոպոսաց եղիցի իշխանաց՝ ըստ պատահման, եւ
գլխաւորաց ժողովրդեան, այլ եւ՝ քահանայից իմաստնոց եւ վարդապետաց,
սակայն աւանդապահ այսմ իրի եպիսկոպոսք եղիցին: Բայց եւ ոչ եպիսկոպոսք
տգէտք եւ արծաթասէրք, այլ գիտունք եւ ճշմարիտք ըստ օրինացն եւ
պատուիրանացն Յիսուսի վարժեալք: Եւ եթէ պատահի եպիսկոպոս տխմար
այսմ իրի, վարդապետօք, եւ քահանայիւք, եւ աշխարհականօք վարեացին եւ
այսոքիկ իմաստունք լիցին ուսման աստուածայնոյ, եւ անբամբաս մնասցէ ի
հերձուածողաց ամենեւին: